ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԹԻՖԼԻՍ ԺԱՄԱՆԵԼԸ։

Դեկտեմբերի 8-ին երեկոյեան 5 ժամի դնացքով Թիֆլիս ժամանեց Ազգիս ծերունազարդ Քահանայապետ և Սրբազնադոյն Կաթուղիկոս Տ. Տ. Մկրտիչ Առաջինը։ Նորին Սրբութեան ընդառաջել էր մինչև Ալէքսանդրապոլ Թեմիս սրբ. Առաջնորդը։ իսկ երկաթուղու կայարանում դիմաւորեցին Թիֆլիս գտնուած բոլոր վարդապետները և մի խումբ քահանայք, պ. ոստիկանապետը, Թիֆլիսի նորընտիր քաղաքագլուխը, հայ երեսփոխանները, մի քանի հայ թերթերի խմբագիրներ, հասարակութեան այլևայլ դասերի ներկայացուցիչներ և ժողովրդի բազմութիւն։

Ճանապարհին գտնուած եկեղեցիների զանգերը աւետում էին ժողովրդի Վեհ. Հայրապետի գալուստը։

Վանքի աւագ եկեղեցու բակում, չնայելով որ անակնկալ էր Վեհի գալուստը և Թիֆլիզի հասարակութեան անյայտ, այնուամենայնիւ խռնուած էր խուռն բազմութիւն ամբողջ հոգևորական դասի և Ներսիսեան դպրոցի ուսուցչական և աշակերտական խմբերի հետ ի միասին։

Վեհափառը հոգևորական դասի և պատգամաւորների ուղեկցութեամբ և ժողովրդի ցնծալից կեցցէներով ընթանալով դէպի վեհարան սանդուխների գլխից օրհնեց ժողովուրդը, որոնց կեցցէների ձայնը զանգերի ղողանջիւնի հետ թնդացնում էին օդը։

Վեհարանում նորին օծութեան ներկայացան զանազան պատգամաւորութիւններ և այնուհետև հանդիստ առաւ իւր համար պատրաստուած օթեւանում։

Վանքի բակում պատրաստուած էր պատշաճաւոր լուսավառութիւն։

ՎԵՀ. ՀԱՅՐԻԿԻ ԿԻՍԱՐՁԱՆ

«Անահիտի» մէջ կարդում ենք, որ հայազգի Գանդակադրծ Պ. Տէր Մարուքեանցը պատրաստել է ամենայն Հայոց